ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 69-Լ

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԴԱԺԱՆ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՈՒ ՊԱՏԺԻ ԴԵՄ ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՎ ՍՏԱՄԲՈՒԼԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՐԱԿԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 15-ի «Ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների 2024-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1803-Լ որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 9-րդ ուղղության («Մշակվել և ներդրվել է ՄԱԿ Խոշտանգումների դեմ պայքարի կոնվենցիայի և Ստամբուլի արձանագրության վերաբերյալ իրականացվող վերապատրաստումների և դասընթացների որակը գնահատելու հատուկ մեթոդաբանություն») 1.6-րդ գործողության.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի և Ստամբուլի արձանագրության վերաբերյալ իրականացվող վերապատրաստումների և դասընթացների որակը գնահատելու հատուկ մեթոդաբանությունը՝ համաձայն հավելվածի:

2.Հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության մարդկային ռեսուրսների կառավարման վարչության ղեկավարին:

3.Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
29.09.2025թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ ներքին գործերի նախարարի
2025 թվականի սեպտեմբերի 29 -ի
N 69 - Լ հրամանի

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԴԱԺԱՆ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՄ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՈՒ ՊԱՏԺԻ ԴԵՄ ՄԱԿ–Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՎ ՍՏԱՄԲՈՒԼԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՐԱԿԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ–ի կոնվենցիայի և Ստամբուլի արձանագրության վերաբերյալ իրականացվող վերապատրաստումների և դասընթացների /այսուհետ վերապատրաստում/ որակը գնահատելու հատուկ մեթոդաբանությունը պարունակում է երկու հիմնական հասկացություն: Առաջինը դա իրականացվող վերապատրաստումների որակի գնահատումն է, երկրորդը՝ կոնկրետ տեսակի /ՄԱԿ–ի կոնվենցիայի և Ստամբուլի արձանագրության վերաբերյալ/ անցկացման որակի գնահատումն է:

Հիմք ընդունելով Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ–ի կոնվենցիայի և Ստամբուլի արձանագրության վերաբերյալ իրականացվող վերապատրաստումների յուրահատկությունը և թեմայի զգայունությունը՝ անցկացվող դասընթացի որակի գնահատումը պահանջում է գնահատման հատուկ մեթոդաբանության մշակում:

Գնահատման նպատակն է հասկանալ ծախսված ռեսուրսները օգնել են ծառայողներին մասնագիտացված իրականացնել գործառույթային պարտականությունները:

Գնահատումը իր մեջ ներառում է հիմնական երեք բաղադրիչ.

1.ծառայողների գիտելիքների և հմտությունների գնահատում

2.վերապատրաստման գործընթացի որակի գնահատում

3.վերապատրաստվողների բավարարվածությունը և արձագանք՝ ստացված գիտելիքի նկատմամբ:

Վերապատրաստման որակի գնահատումն օգնում է բոլոր շահագրգիռ կողմերին հասկանալ արդյոք վերապատրաստումը տվել է ցանկալի արդյունք, թե առկա է այն վերանայելու կամ բարելավելու կարիք:

Վերապատրաստման գնահատման հիմնական չափորոշիչները

Վերապատրաստման գնահատման համար կիրառվում է արդյունավետության հետևյալ չափորոշիչները:

1.Թեստավորում –մատուցած գիտելիքի յուրացման աստիճանի գնահատում:

2.Վերապատրաստվողների առաջադիմության գնահատում– այդ չափորոշիչը թույլ կտա գնահատել որքանով է վերապատրաստումը տվել ցանկալի արդյունք:

3.Հետադարձ կապի ապահովում – վերապատրաստվողների կարծիքի հավաքագրում դասընթացի օգտակարության և որակի մասին:

4.Նախագծային աշխատանք –որը թույլ կտա գնահատել ստացված գիտելիքի կիրառումը գործառույթների իրականացման ընթացքում:

5.Կատարված աշխատանքի, ծախսված ռեսուրսների ու ստացված արդյունքների վերլուծությունը- թույլ կտա գնահատել բավարարված է անձնակազմը ստացված գիտելիքով, թե առկա է որակի բարելավման խնդիր, կիրառվելու է այն ծառայության ընթացքում, արդարացված են կատարված ծախսերը, թե ոչ:

Վերապատրաստման որակը

Որակը իրենից ներկայացնում է բազմակողմ կատեգորիա, որն առնչվում է ինստիտուցիոնալ առաքելությանն ու նպատակներին, ինչպես նաև ընդունված չափորոշիչներին՝ տվյալ բուհի, ծրագրի կամ դասընթացի շրջանակներում որտեղ որակը մի կողմից կարող է դիտարկվել որպես գիտելիքի գնահատական՝ օրինակ «գերազանց» մյուս կողմից որպես վերջնաարդյունք՝ օրինակ «գիտելիքների բարելավում»:

ՄԱԿ-ի կոնվենցիայի և Ստամբուլի արձանագրության վերաբերյալ իրականացվող վերապատրաստումների որակը գնահատելու հատուկ մեթոդաբանությունը

Որակի գնահատման ընտրված մեթոդները կարող են լինել տարբեր, սակայն պարտադիր պարունակում են գնահատման 5 հիմնական մակարդակներ, որոնց հիմքում դրված են վերապատրաստման գնահատման և որակի հիմնական չափորոշիչները.

1.նախնական պատկեր
2.ուսուցում
3.արձագանք
4.վարքագիծ
5.արդյունք

Առաջին մակարդակը՝ նախնական պատկերը թույլ է տալիս հասկանալ ինչ մակարդակի գիտելիք կամ իրազեկվածության աստիճան ունի ծառայողը վերապատրաստման և դասընթացի կոնկրետ թեմաներից:

Տվյալ մակարդակի ստուգումներն իրականացվում են հարցարանի միջոցով, որը կազմված է ինչպես դասընթացին վերաբերող, այնպես էլ ակնկալվող արդյունքի մասին հարցերից:

Երկրորդ մակարդակը՝ ուսուցումը, որը գնահատում է, թե ինչպես է ծառայողը յուրացրել ստացված գիտելիքները:

Տվյալ մակարդակի ստուգումները հնարավոր է իրականացնել գրավոր քննությունների, թեստերի, պրակտիկ խնդիրների լուծման կամ ուսումնական սիմուլյացիաների միջոցով:

Տվյալ մակարդակը նպատակ է հետապնդում հասկանալ, թե ինչ ծավալով է յուրացրել ծառայողը վերապատրաստումը կամ դասընթացը, ինչպես նաև դասավանդման մեթոդաբանության արդյունավետությունը:

Երրորդ մակարդակը՝ արձագանքը, նպատակ ունի ստանալ հետադարձ կապ վերապատրաստվողից, հասկանալու համար, թե արդյոք վերապատրաստման մատուցումը հետաքրքիր և ընկալելի է, արդյոք անհրաժեշտ կլինի ստացված գիտելիքը ծառայության ընթացքում, առկա են արդյոք թեմային առնչվող հարցեր, որոնք բաց են մնացել:

Տվյալ մակարդակի ստուգումներն իրականացնելու համար անհրաժեշտ է վերապատրաստման և դասընթացի ավարտին լրացվի հարցաթերթ, որը կազմված կլինի նաև առաջին մակարդակում նշված հարցերից:

Չորրորդ մակարդակը՝ վարքագիծը թույլ է տալիս ծառայության ընթացքում հասկանալ օգտագործվում են ստացված գիտելիքները, կամ առկա է արդյոք տարբերություն ծառայության իրականացման որակի մեջ վերապատրաստումը ավարտելուց հետո:

Որպես ցուցանիշ կարելի է օգտագործել խրախուսանքների թիվը՝ այն ծառայողների ովքեր անցել են վերապատրաստում, դիմում-բողոքների թիվը, ծառայության որակի բարելավման թիվը և այլն: Այդ մակարդակի գնահատումը կարողությունների զարգացման ոլորտի պատասխանատու ստորաբաժանման կողմից կարող է իրականացվել բանավոր կամ գրավոր հարցումների միջոցով ինչպես վերապատրաստում անցած ծառայողների ղեկավարների, գործընկերների, այնպես էլ քաղաքացիների կողմից լրացված հարցաթերթերի կամ առկայության դեպքում դիմում-բողոքների ուսումնասիրության միջոցով:

Հինգերորդ մակարդակը արդյունքն է, որի շնորհիվ հնարավոր է եզրակացնել իրականացված վերապատրաստումների արդյունավետության մասին և գնահատել անցկացված վերապատրաստման որակը:

Որակի գնահատման ընտրված այս մեթոդաբանությունը միակն է, որը կարող է լիարժեք գնահատել վերապատրաստման արդյունավետությունը: Դա պայմանավորված է ծառայողների կողմից նախնական և ավարտական հարցաշարերի վերլուծությամբ ստացված տվյալներով, որոնցից է.

1.կոնկրետ թեմայի առնչվող նախնական և ավարտական գիտելիքների մակարդակների տարբերությունը.

2.ավարտական թեստավորման կամ քննության ստացված գնահատականը որպես ծառայողի նախկինում ունեցած գիտելիքի և ստացված գիտելիքի տոկոսային հարաբերակցությունը:

3. ակնկալվող արդյունքը և նպատակին հասնելու աստիճանը.

Հիմք ընդունելով Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի և Ստամբուլի արձանագրության վերաբերյալ իրականացվող վերապատրաստումների յուրահատկությունը և թեմայի զգայունությունը՝ անցկացվող դասընթացի որակի գնահատումը պահանջում է գնահատման հատուկ մեթոդաբանության մշակում:

Տվյալ վերապատրաստման որակի գնահատման վերը նշված ընտրված մեթոդաբանության համատեքստում անհրաժեշտ է ավելացնել մի շարք ուսուցման գործընթացին վերաբերվող բաղադրիչներ, որոնց շնորհիվ գնահատումը կդառնա հատուկ և լիարժեք տվյալ մեթոդաբանության համար: Անհրաժեշտ է իրականացնել.

1.տվյալ վերապատրաստման ծրագրի բովանդակության գնահատում /հաշվի առնելով յուրահատկությունը/

2.տվյալ վերապատրաստման ծրագրի ծավալի և բարդության գնահատում

3.մշակված դրավիճակային մոդելավորման գնահատում /պրակտիկ գործողությունները տեղանքի և ժամանակի մեջ/

4. յուրացման աստիճանի վերահսկման գնահատում /ավարտական թեստավորման կամ քննության գնահատում:/

Որակի աուդիտ

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի և Ստամբուլի արձանագրության վերաբերյալ իրականացվող վերապատրաստումների որակը հնարավոր չէ լիարժեք գնահատել առանց որակի աուդիտի: Որակի աուդիտը դա որակի գնահատման գործընթացն է, որի միջոցով պատվիրատու ստորաբաժանումը ստուգում է կրթական ծրագրի որակի ապահովման ներքին ընթացակարգերի առկայությունը, համարժեքությունը նպատակներին և դրանց փաստական իրականացումը:

Որակի աուդիտը անհրաժեշտության դեպքում կապահովի նաև որակի բարելավման և շարունակական բարձրացման գործընթաց:

Այդ նպատակի իրականացման նկատառումներից ելնելով դասընթացի որակը գնահատելու նպատակով պատասխանատու ստորաբաժանման կողմից անհրաժեշտ է իրականացնել Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի և Ստամբուլի արձանագրության վերաբերյալ դասընթացի որակի աուդիտ: